ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅՈՒՆ
ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՈՐՈՇՈՒՄ

N 95 - Ա
20 մայիսի 2014 թ.

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԳԵՂԱՐՔՈՒՆԻՔԻ ՄԱՐԶՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ԶՈՐԱՀԱՎԱՔԱՅԻՆ ՆԱԽԱՊԱՏՐԱՍՏՈՒԹՅԱՆ ԲԱԺՆԻ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆՆԵՐԻ ԱՆՁՆԱԳՐԵՐԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ԵՎ ՔԱՂԱՔԱՑԻԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ՊԱՇՏՈՆԻ ԱՆՁՆԱԳՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով <<Քաղաքացիական ծառայության մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 9-րդ հոդվածի 3-րդ մասի, 10-րդ հոդվածի 1-ին մասի, <<Իրավական ակտերի մասին>> Հայաստանի Հանրապետության օրենքի 70-րդ հոդվածի 1-ին մասի և Հայաստանի Հանրապետության Նախագահի 1997 թվականի մայիսի 6-ի ՆՀ-728 հրամանագրի 1.6-րդ կետի դրույթներով

որոշում եմ՝

1. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2014 թվականի մայիսի 5-ի N 375-Ա որոշման 1-ին կետի 1-ին ենթակետի համաձայն հաստատել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի զորահավաքային նախապատրաստության բաժնի վարիչի /ծածկագիր՝ 64-2.2-55/, գլխավոր մասնագետի /ծածկագիր՝ 64-3.1-18/ քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերը:
2. Հայաստանի Հանրապետության քաղաքացիական ծառայության խորհրդի 2014 թվականի մայիսի 5-ի N 375-Ա որոշման 1-ին կետի 2-րդ ենթակետի համաձայն ուժը կորցրած ճանաչել Հայաստանի Հանրապետության Գեղարքունիքի մարզպետարանի աշխատակազմի ղեկավարի տեղակալի քաղաքացիական ծառայության պաշտոնի /ծածկագիր՝ 64-1-2-1/ անձնագրի 11-րդ կետի <<ե>>, <<զ>>, <<է>>, <<ը>>,<<թ>>,<<ժ>>,<<ժա>>,<<ժբ>>, <<ժգ>> և <<ժդ>> ենթակետերը:
3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից:

ՄԱՐԶՊԵՏ՝ Ռ.ԳՐԻԳՈՐՅԱՆ